ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF FOREIGN AFFAIRS OF
THE REPUBLIC OF ARMENIA
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ | DEPUTY MINISTER

№ 1101/9416-25
20.02.2025

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ
ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ
ՎԱՐԴԱՆ ԿՈՍՏԱՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ գործընկերներ,

Տեղեկացնում ենք, որ Եվրոպայի խորհուրդը (ԵԽ) 2026թ. նշվող Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիայի (Կոնվենցիա) 25-ամյակի շրջանակում հայտարարել է Լանդշաֆտի մրցանակաբաշխություն, որին կարող են մասնակցել Կոնվենցիայի կողմ հանդիսացող երկրները (Հայաստանը կոնցենվիան վավերացրել է 2004թ.):

ԵԽ Լանդշաֆտի մրցանակը կոչված է խթանել վարչատարածքային միավորների կայուն զարգացումը՝ բնապահպանական և սոցիալ-տնտեսական եվրոպական և միջազգային չափանիշներին համապատասխան, բարձրացնել հանրային իրազեկվածությունը լանդշաֆտների պաշտպանության կարևորության, դրանց դերի և փոփոխությունների վերաբերյալ, ինչպես նաև մեծացնել քաղհասարակության և հանրային մասնակցության դերը ՏԻՄ ոլորտում:

Մրցանակը շնորհվում է լանդշաֆտների պաշտպանության, կառավարման և պլանավորման հարցերում նշանակալի ավանդ ունեցող ՏԻՄ-երին և հասարակական կազմակերպություններին: Մրցանակաբաշխությունը տեղի է ունենալու Իտալիայում 2026թ. հոկտեմբերին:

Կոնվենցիայի անդամ յուրաքանչյուր երկիր պետք է ներպետական մրցութային կարգով ընտրի և մինչև <u>ս.թ. դեկտեմբերի 31-ը</u> ԵԽ քարտուղարությանը ներկայացնի վերոնշյալ պայմաններին համապատասխան ՏԻՄ կամ ՀԿ հանդիսացող մեկ թեկնածու: Հավելյալ հարցերի համար կարելի է դիմել Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիայի քարտուղարություն հետևյալ էլեկտրոնային հասցեներով՝ landscape@coe.int, nadiya.marino@coo.int:

Կից ներկայացնում ենք ԵԽ Լանդշաֆտի մրցանակի դիմում-հայտի ձևաթուղթը և մրցանակաբաշխության ընթացակարգերի վերաբերյալ տեղեկատվական ուղեցույցը:

Թեկնածուների անվանացանկ ձևավորելու նպատակով՝ խնդրում ենք դիտարկել վերոնշյալ տեղեկատվությունը Ձեր նախարարության/կոմիտեի և

հնարավորության դեպքում նաև՝ ՀՀ մարզերի և համայնքների պաշտոնական կայքէջերում շրջանառելու հնարավորությունը:

Առդիր՝ 17 էջ:

Հարգանքով՝

X

ՊԱՐՈՒՅՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Արման Մելքումյան
Եվրոպայի վարչության
Եվրոպայի խորհրդի բաժնի երրորդ քարտուղար
Հեռ.՝ 060620648
Էլ-փոստ՝ a.melkumyan@mfa.am